Ընդհանուր տեղեկատվություն

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ. հասցե • Հեռախոս.	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	Քրիստոնեական արժեհամակարգի մատուցման խնդիրները դպրոցում: Հայերը քրիստոնեական քաղաքակրթության համակարգում
Ուսուցչի տվյալներ • Ա.Ա.Հ. • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Սիմոնյան Անի Արթուրի Մանկավարժ Հայոց եկեղեցու պատմություն 5-9
Ուսումնական հաստատության տվյալներ	

• Անվանումը, հասցե • Հեռախոս • էլ. հասցե (տնօրինության) • Web կայքի հասցե	ՀՀ Կոտայքի մարզ, Նոր Հաճնի Մեծն Մուրադի անվան N4 հիմնական դպրոց

Հետազոտության վերաբերյալ հաշտվետվություն

Նպատակը և հետազոտական հարցը	Նպատակը: Աղանդավորների բազմահազարանոց բանականն արդեն անհանգստություն է պատճառում: Ուստի ընտրելով այս թեման, ցանկանում եմ հնարավորինս սեղմ ներկայացնել քրիստոնական արժեհամակարգի դերն ու նշանակությունը Հայաստանում և հայերի համար: Հետազոտական հարց: Արդյո՞ք շատ են քրիստոնեական արժեհամակարգի մատուցման խնդիրները դպրոցում:
Թեմայի կարևորությունը և նշանակությունը Ձեր թիրախային խմբի համար	Թեմայի կարևորությունը: Հայաստանում օր-օրի ավելանում են տարատեսակ աղանդեր: Աղանդավորները թիրախավորում են մեծահասակներին, ովքեր անտեղյակ են քրիստոնեական արժեհամակարգին, բացի այդ նրանք ունեն բավականին ազատ ժամանակ և հավատում են այն ամենին, ինչ լսում են:
Ո՞ր առանցքային կոմպետենցիան է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	սովորել սովորելու, ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն, մշակութային
Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին	• դիրքորոշում • արժեքներ
Օգտագործված մեթոդները	• համագործակցային մեթոդ
Իրականացման ժամանակահատվածը	Մեկ շաբաթ

Թիրախ խումբը /ֆանակ, սեռային բաշխում/	6-րդ դասարանի աշակերտներ
Իրականացման վայրը • Դպրոցը • Դասարանը	ՀՀ Կոտայքի մարզ, Նոր Հաճնի Մեծն Մուրադի անվան N4 հիմնական դպրոց 6-րդ դասարան
Գործընթացի համառոտ նկարագրություն /տպավորություններ, կարծիքներ, դժվարություններ/	Հայ Եկեղեցում ընդունված է մանկամկրտությունը. հենվելով հինկտակարանյան օրենքի վրա՝ 8 օրեկան երեխային մկրտում ենք՝ նրան այդ հասակից արդեն Աստծո շնորհին ու առաջնորդությանը հանձնելով, մեծացնելով մեր Եկեղեցու վարդապետությամբ և նրան սնելով մեր հայրերի մաքրազտած (ֆիլտրած) հոգևոր անաղարտ կաթով: Քրիստոնեական ազգային արժեքային համակարգի ձևավորումը տեղի է ունեցել ո՛չ մեկ տարում, և ո՛չ էլ մեկ հարյուրամյակում: Այս գործընթացը, Հայաստանում սկիզբ առնելով առաքելական քարոզչության տարիներից, անցել է դարերի ու հազարամյակների միջով և ձգվում է մինչև մեր օրերը: Այդ ընթացքում, ինչպես ցույց է տալիս մեր ժողովրդի պատմությունը, ձևավորվեցին և վերջնականապես կայացան այն ազգային քրիստոնեական հիմնարար արժեքները, որոնք կազմում են հայ մարդու աշխարհայացքի առանցքը: Այդ արժեհամակարգը մեր ժողովրդին հնարավորություն է տվել պահպանելու իր հայրենիքը, հավատը, մշակույթը, ազգային ինքնագիտակցությունը և վերականգնելու անկախ պետականությունը: Հայ քրիստոնյայի շարժիչ ուժը միշտ եղել են ազատ մտածելու ու գործելու կարողությունը և պատասխանատվության

գիտակցությունը: Այս հարցում, կարծում եմ, մեծագույն դերը վերապահված է ընտանիքին, նրա դավանած արժեքներին ու սկզբունքներին: Ընտանիքն է, որ պիտի չափավորի, սահմանափակի ԶԼՄ-ների ու համացանցի, փողոցի ու օտարոտի բարքերի և կրոնական հոսանքների ազդեցությունը, իր անդամին թույլ չտա տրվելու սպառողի հոգեբանությանը՝ այդ ամենը չեզոքացնելով տիրող ջերմ ու անմիջական՝ սիրո մթնոլորտով, բարիք արարելու տրամադրությամբ: Այլապես սերիալների ու հոլովակների էժանագին պահանջարկ բավարարող ժամանցի ինստիտուտը կբռնի ճաշակ ձևավորող ու կրթող և ժամանակի փորձությունն անցած ավանդական արժեքների տեղը:

Քրիստոնեական արժեհամակարգի դերը

Կրոնները սովորաբար ազդեցություն ունեն մշակույթի վրա, որովհետև ձևավորում են աշխարհայացք, նոր գաղափարներ, ընկալումներ:

Մշակույթը նյութական արժեքների, արվեստների միջոցով մարդկային աշխարհընկալման, զգացումների, գաղափարների արտահայտությունն է: Այս իմաստով կարելի է ասել, որ բոլոր կրոնները նաև մշակութային արժեքների ձևավորման գործում կարևոր դերակատարություն ունեն:

Քրիստոնեական գաղափարները ևս արտահայտվել են մշակույթի գործերով, բայց փոխադարձաբար մշակույթն իր հերթին կրոնի համար ծառայում է որպես արտահայտչամիջոց իր գաղափարների դրսևորման ու տարածման համար: Այսպես, ճարտարապետական արվեստով կառուցվել են քրիստոնեական պաշտամունքային վայրեր, երաժշտությամբ, գիր ու դպրությամբ քարոզվել և քարոզվում են քրիստոնեական գաղափարները, ընկալումները:

Այսպիսով, կրոնը ձևավորում է մշակույթ, իսկ մշակույթն իր հերթին դառնում է կրոնի լեզուն՝ կրոնական համապատասխան գաղափարների և ուսուցումների դրսևորման ու տարածման համար:

Ակնհայտ է քրիստոնեական գաղափարների դրական ազդեցությունը եվրոպական քաղաքակրթության ու մշակույթի զարգացման վրա: Գրողներ, փիլիսոփաներ Քրիստոսի ուսմունքը, քրիստոնեական գաղափարների քարոզչությունը մարդկության պատմության մեջ հեղափոխական են համարել: Ի՞նչ առումով էր քրիստոնեությունը հեղափոխական:

«Հեղափոխական» բառը եկեղեցական հեղինակների բառապաշարում այս առումով չի գործածվում: Մարդկության կյանքում քրիստոնեության շրջադարձային դերը նկարագրելու համար եկեղեցական հեղինակները գործածում են «կենարար», «փրկարար» բնութագրող բառերը:

Տարբեր փիլիսոփաներ կարող էին քրիստոնեության առումով օգտագործել «հեղափոխական» բառը, որովհետև նրանց համար ընդունելի է հեղափոխությունն իբրև երևույթ, մինչդեռ քրիստոնեության համար գաղափարների, առաջադիմության տարածման նպատակով հեղափոխության ձևն ընդունելի չէ:

Ճիշտ է, քրիստոնեությունը նույնիսկ քաջալերող է համարում պայքարը նվիրական արժեքների, սրբությունների, հայրենիքի, մերձավորների, բարեկամների պաշտպանության համար՝ որպես իրագործում Քրիստոսի պատվիրանի. «Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար» (Հովհ. 15.13): Դրա համար էլ Եկեղեցին սրբացրել է նաև զորականների: Սակայն հեղափոխության ձևը Եկեղեցու կողմից ընդունելի չէ:

Հեղափոխության ջատագովներից Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Էնգելսի գաղափարների թերություններից մեկը քրիստոնեության տեսանկյունից այն է, որ նրանք հասարակությունը բաժանում են դասակարգերի՝ ուսուցանելով մի դասակարգի պայքարը մյուսի դեմ: Սակայն Եկեղեցու համար բոլոր դասակարգերի մարդիկ Եկեղեցու անդամներ են, և այս իմաստով բաժանումը մերժողական է դիտվում: Նաև քաղաքական դաշտում գործածվող

«ընդդիմություն» բառը ևս չի կարող բնութագրել եկեղեցական դիրքորոշումը մարդկանց հանդեպ, քանզի քրիստոնեական տեսանկյունից և՛ իշխանության, և՛ ընդդիմության ներկայացուցիչները Եկեղեցու անդամներ են (իհարկե, եթե մկրտությամբ, հավատքով, խոստովանությամբ պատկանում են Եկեղեցուն):

Դրա համար էլ Եկեղեցին ընդունում է և՛ ընդդիմադիրներին՝ որպես հավատացյալների, Եկեղեցու զավակների, ինչպես նաև իշխանություններին, որոնց հորդորում, և՛ հիշեցնում է ծառայությունն ու սպասավորությունը ժողովրդին, ինչը կարելի է անել Եկեղեցի-պետություն հարաբերությունների շրջագծում: Էնգելսի և Մարքսի հետ կապված պետք է ասել, որ նրանց առաջադիմական գաղափարներից է մարդկանց շահագործման դադարեցումը, աղքատներին աջակցությունը, ինչն ընդունելի է միանգամայն և բոլոր բարեպաշտ մարդկանց ցանկությունն է: Այս նեղ իմաստով կարելի է ասել, որ նման ձգտումի առկայությամբ մենք բոլորս էլ մարքսիստներ ենք ինչ-որ առումով:

301 թ. Հայաստանում քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն արդեն իսկ կանխորոշել էր հայ հասարակության մշակութա-արժեքային կողմնորոշումը: Կրոնական համակարգի փոփոխությունը պատահական չէր և պայմանավորված էր հայ հասարակության հոգևոր, մշակութային զարգացման օրինաչափություններով, ինչպես նաև էթնիկական ինքնապաշտպանության պահանջով: Քրիստոնեության ընդունումից հետո անհրաժեշտ էր նոր ուսմունքի դրույթների, հիմնական գաղափարների և խորհրդանիշների հիման վրա կառուցել հայ հասարակության հոգևոր-մշակութային կյանքը:

Հայաստանում քրիստոնեության տարածման և հաստատման ժամանակ հայ հասարակությունն արդեն բավական բարձր կազմակերպված էթնիկական ընդհանրություն էր: Հայոց եկեղեցին քրիստոնեական ազգային արժեքային նոր համակարգի ձևավորման

ժամանակ պահպանեց էթնիկական ինքնագիտակցության մեջ արմատացած, հայկականությունը բնորոշող հատկանիշները:
Օրինակ՝ ազգային ինքնագիտակցության այդ հատկանիշները լավագույնս են պահպանվել Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» մեջ, որում Պատմահայրը մեծ գովեստով ու հարգանքով է ներկայացնում Հին Հայաստանի հայրենասեր, հայրենիքը շենացնող արքաներին, հայոց քաջ նախնիներին: Նաև գիտենք, որ որոշ քրիստոնեական տոնակատարություններ ներառել են մինչքրիստոնեական ժողովրդական ավանդույթներ և սովորություններ, օրինակ՝ Վարդավառը, Տեառնընդառաջը, Խաղողօրհնեքը և այլն:
Միաժամանակ քրիստոնեական ուսմունքի շրջանակներում ձևավորվել էր հասարակական – պետական կյանքի կազմակերպման այնպիսի մոդել (բնորդ), որը ուսուցանում ու նաև պահանջում էր քրիստոնեական բարոյականության հիմքերի վրա կառուցել ներհասարակական, ներպետական կյանքը՝ արքունիք–նախարարներ, իշխաններ – հպատակներ փոխհարաբերությունները և այլն:
Քրիստոնեական ազգային արժեքային համակարգ ստեղծելու համար անհրաժեշտ էր ունենալ արժեքների, խորհրդանիշների, գաղափարների մշակման կենտրոն:
Պետականության գոյության պայմաններում եկեղեցին սովորաբար այդպիսի կենտրոն ձևավորում էր երկրի մայրաքաղաքում: Հայ հասարակության համար նման կենտրոն դարձավ Էջմիածինը: Հետագայում, անկախ այն հանգամանքից, որ կաթողիկոսական աթոռը տեղից տեղ էր տեղափոխվում, Էջմիածինը միշտ պահպանում էր արժեհամակարգը խորհրդանշող և պահպանող իր կարգավիճակը:
Հայկական քրիստոնեական արժեքային համակարգի մշակման ժամանակ հայ հասարակության մեջ առկա էին տարբեր՝ հեթանոսական, զրադաշտական, քրիստոնեական, ասորական,

հունական և մշակութային այլ կողմնորոշումներ:

Կենտրոնի խնդիրն էր ոչ միայն ձևավորել միասնական մշակութային մոդել, այլև ապահովել այդ մոդելի կենսագործումը: Այս նպատակով արժեքային համակարգի կենտրոնը ստեղծեց նաև ենթակենտրոններ՝ թեմեր, գաղթավայրերի հոգևոր- մշակութային կենտրոններ և այլն:

Նոր արժեքային համակարգը պետք է ունենար նույնաբնույթ հոգևոր տարածք, որի հիմնական հատկանիշներն էին լեզուն, հավատը, դավանանքը (հավատով՝ քրիստոնյա, դավանանքով՝ հայ առաքելական):

Հայոց եկեղեցին աշխարհիկ իշխանության (արքունիք) օժանդակությամբ ձեռնամուխ եղավ հայոց այբուբենի ստեղծմանը: Հայոց լեզուն ստանձնում է ազգային արժեքային համակարգը ձևավորող կարևոր գործառույթ:

Քրիստոնեության համընդհանրական գաղափարն ազգայնացվում և հայ հասարակության գիտակցության մեջ ներդրվում էր լեզվի միջոցով:

Արժեհամակարգի մշակման ժամանակ հայերեն թարգմանվեց «Աստվածաշունչը», ինչպես նաև քրիստոնեական մեծածավալ գրականություն:

Յուրաքանչյուր էթնիկական ընդհանրություն ունի աշխարհի վերաբերյալ մշակած պատկերացումներ, աշխարհայացք: Հայ հասարակությունը նույնպես մշակել և ժառանգաբար կանոնակարգված փոխանցում էր իր փորձը, սովորույթները, բարքերը: Սակայն ոչ մի հասարակություն, այդ թվում՝ և հայկականը, ի վիճակի չէր գոյատևելու առանց փոփոխությունների:

Քրիստոնեական արժեհամակարգի մատուցման խնդիրները

Հայաստանում քրիստոնեության՝ պետական կրոն ընդունումից հետո քրիստոնեական վարդապետությունը (ուսմունքը), Հայոց եկեղեցու դավանանքը, խորհրդանիշները դարձան հայ ժողովրդի

ազգային գաղափարախոսության, ինքնահաստատման հզոր կովանները: Ի տարբերություն հեթանոսական կրոնի՝ քրիստոնեական վարդապետությունը մարդուն հաչակեց արարչագործության թագնու պսակը և հոգևոր-բարոյական կատարելության ուղին սահմանեց որպես մարդու երկրային կյանքի առաքելություն:

Հայոց եկեղեցու առջև դրվում են երկու կարևորագույն խնդիրներ. նախ՝ ուսուցանել քրիստոնեական վարդապետությունը Մեծ Հայքի ողջ տարածքում, նոր քրիստոնեական ուսմունքից բխող հարաբերություններ և սկզբունքներ ներդնել երկրի վարչաքաղաքական համակարգում, մյուս կողմից՝ այնպես կազմակերպել փոփոխությունները, որ դրանք հասարակության համար անշրջելի բնույթ ստանան: Այս նպատակով Հայոց եկեղեցին իր վրա է վերցնում հոգևոր-մշակութային կյանքի կազմակերպման հիմնական ձևերի, սկզբունքների մշակման խնդիրը:

Քրիստոնեական ազգային արժեհամակարգի ձևավորմանը զուգընթաց ձևավորվում էր նաև հայերի ազգային-հոգևոր նկարագիրը (ազգային-հոգևոր նկարագիրը յուրահատուկ համակարգ է, որում խտացված են տվյալ էթնիկ ընդհանրությանը բնորոշ լեզվական, դավանական, հոգեբանական, մշակութային, ընտանեկան-կենցաղային և այլ հատկանիշներ): Այդ գործընթացը բաղկացած է միմյանց հետ սերտորեն փոխկապակցված երեք՝ տեսական, գործնական և սոցիոլոգիական (ընկերաբանական) մասերից: Առաջինի մեջ մտնում են ազգային- հոգևոր նկարագրի անբաժան մաս կազմող գաղափարախոսությունը, պատկերացումները, խորհրդանիշները:

Արժեհամակարգի ձևավորման գործընթացը տեղի էր ունենում հասարակական կյանքի բոլոր՝ քաղաքական, սոցիալ-տնտեսական, հոգևոր և մշակութային բնագավառներում, ժամանակ առ ժամանակ փոփոխվող արտաքին միջավայրի

	պայմաններում, ուստի ազգային-հոգևոր նկարագիրը բազմաշերտ կառուցվածք ունի: Ազգային-հոգևոր կենտրոնի խնդիրն էր պահպանել էթնիկական նույնականությունը և թույլ չտալ վտանգավոր ձևախախտումներ: Այս հանգամանքը առանձնակի կարևորություն էր ստանում պետականության բացակայության ժամանակ, երբ հայությունը զրկվում էր քաղաքական կենտրոնից և կազմակերպվում որպես մշակութակենտրոն հասարակություն, կամ այն ժամանակ, երբ հայ ժողովրդի մի մասը բնակություն էր հաստատում պատմական հայրենիքից դուրս: Անհրաժեշտություն էր առաջանում հասարակության հիշողության մեջ պահպանելու այն արժեքները, որոնք նա պատմական հանգամանքների բերումով կորցրել էր, սակայն դրանց վերականգնումը պատմական անհրաժեշտություն էր: Օրինակ՝ ուշ միջնադարում հոգևոր ազգային միտքը իրականացրեց անկախ պետականության գաղափարի վերականգնումը հասարակական գիտակցության մեջ: Հայաստանում քրիստոնեության տարածման և հաստատման ժամանակ որոշակի փոփոխություններ տեղի ունեցան նաև ծեսերում և սովորույթներում: Նախ՝ քրիստոնեությունն իր հետ բերեց և ստեղծեց նոր ծեսեր, տոներ (Թարգմանչաց տոն, Վարդանանց տոն և այլն) ու սովորույթներ և դանդաղորեն դրանք ներդրեց հասարակության գիտակցության մեջ: Մյուս կողմից՝ այն որդեգրեց արդեն ավանդույթ դարձած որոշ ծեսեր և սովորույթներ, թույլատրեց դրանց կատարումը, սակայն դրանց տրվեց նոր բովանդակություն: Հոգևոր նկարագրի հատկանիշների ամբողջացման շարքում ուրույն տեղ են զբաղեցնում նաև կենցաղային հատկանիշները՝ բնակարանը, հագուստը, սնունդը, ինչպես նաև վարվելակերպի նորմերը: Այսպիսով՝ ազգային-հոգևոր նկարագիրն ամբողջանում և ավարտուն տեսք է ստանում մշակութային, մասնավորապես՝

	լեզվական, դավանական, հոգեբանական, ընտանեկան, կենցաղային որոշակի հատկանիշների հիման վրա: Յուրաքանչյուր ժողովրդի հոգևոր նկարագրի, ազգային տարատեսակի հիմնական հատկանիշներն արտահայտվում են մշակույթի բնագավառում, ուստի այնտեղ կենտրոնացված են մյուս մշակույթների համեմատությամբ ունեցած տարբերակիչ առանձնահատկությունները: Բարոյական արժեքների կրող անհատի դաստիարակության հաջորդ և շատ կարևոր հանգրվանը դպրոցն է, որը մեր պատմության բոլոր ժամանակներում առանձնացել է հոգեկերտվածքն ձևավորելու և միտքը կրթելու ուրույն, ազգային ու հոգևոր միջոցներով:
Վեր հանված՝ • Արդյունքներ/արտադրանք • Եզրակացություններ	Այսօրվա աշխարհաքաղաքական պայմաններում հիշյալ արժեքների սերմանման ամենակարևոր դաշտերից մեկը մնում է բանակը: Զորակոչված երիտասարդը, երկու տարի հայրենիքին ծառայելով, տուն է վերադառնում գիտելիքներով, ընկերներով ու կյանքի փորձով հարստացած: Այս ժամանակահատվածն ըստ արժանվույն գնահատելով՝ մոտ 18 տարի է, ինչ ազգային մեր բանակում ծառայություն են անցնում նաև հոգևորականներ թե՛ Արցախում, և թե՛ Հայաստանի Հանրապետության տարածքում: Մեր եկեղեցին բոլոր ժամանակներում կյանքի ու մահվան կռիվ է տվել երկիրն ու ազգը պահպանելու համար: Հիշենք բազում ճակատամարտերը, ուր զինվորին մարտի մղող ոգին հավատն էր, և « մահ չիմացյալ մահ է, մահ իմացյալ՝ անմահություն», կարգախոսը: Մերձավորի մասին հոգ տանելու և անձնազոհության գնով մյուսներին կյանք նվիրելու գաղափարը ամենալուսավոր կետն է քրիստոնեության ուսմունքի մեջ: Մեր պատմության դաժան խաչմերուկներում հայ հոգևորականն իր կերպարով օրինակ է ծառայել իր ժողովրդին, ոգեկոչել՝ պահելու, պահպանելու երկիրը: Անհնար է չգնահատել Հայ Առաքելական եկեղեցու դերը նաև

	պետություն - եկեղեցի - ժողովուրդ միության ու համախմբման, սփյուռքի հայապահպանման հարցերում: Այսօր մեր եկեղեցին համախմբելով իր ուժերը, պատվով է դուրս գալիս դարի մարտահրավերներից, զորացնելով քահանայական թևը նորանոր սպասավորներով, ծառայելով ժողովրդին հոգևոր և մշակութային կրթօջախներով, բարոգչական ժամանակակից միջոցներով, եկեղեցաշինությամբ ու այլ առաքելություններով: Այսօր ավելի, քան երբևէ մեր եկեղեցին իր ժողովրդի հետ կանգնած է ամուր ու հաստատուն հողի վրա, զարդարուն Աստվածային շնորհներով:
Այլ տեղեկատվություն	Քրիստոնեական քաղաքակրթության առանձնահատկությունները Մեզ համար երկրավոր հայրենիքն անգամ հոգևոր է, որովհետև մեր արյունոտուշտ հարևանները երբեք չեն կարողացել այն մեր սրտից հանել՝ նույնիսկ գրավելու, մասնատելու, թալանելու ու բզկտելու, մինչև իսկ ցեղասպանելու ու հայրենազրկելու գնով: Ուսուցման, իսկ մեր դեպքում՝ քրիստոնեական արժեքների սերմանման լավագույն ճանապարհը մեր իսկ օրինակը պիտի լինի. երբեք չպիտի մտածենք, թե մեր զավակը դեռ փոքր է չարը բարուց զանազանելու համար և նրա միջավայրը լցնենք մեր առօրյան, մեր կենսակերպը կազմող ստով ու կեղծիքով: Այսպես վարվելով՝ երեխային անլուծելի գլուխկոտրուկի առաջ ենք կանգնեցնում. մի կողմից ծնողից լսում է, որ որոշ բաներ անել չի կարելի (օրինակ՝ ստել, քծնել, ամեն ինչում շահ հետապնդել և այլն), մյուս կողմից՝ այդ ամենը գործելիս բռնացնում է իր ծնողներին: Ծնողը զավակի համար կատարելատիպ է, իդեալ, որին իր ամբողջ կյանքում ինքը պիտի ձգտի, ուստի ծնողը կամ տան գլխավորը, զավակին իբրև բարոյական անհատ ձևավորվելու ճանապարհին պետք է չափազանց զգույշ լինի՝ նրան չար օրինակ չլինելու համար: Դպրոցի մասին ճշմածը, որպես քրիստոնեական արժեքների սերմանման ու բարոյական անհատի ձևավորման դաշտ, պատշաճ ուշադրության ու սրտացավ վերաբերմունքի դրսևորման

	պարագայում կիրառելի է նաև միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն տվող հաստատություններում, քանի որ ինչպես երբեք վաղ չէ սկսել երեխայի հոգևոր-քրիստոնեական դաստիարակությունը, այնպես էլ երբեք ուշ չէ լրացնել այդ բացը: Անչափ կարևոր է Եկեղեցի-ժողովուրդ կապի անխախտ պահպանումը, որը պետք է արտահայտվի կենսունակ, հոգևոր կապով: Անշուշտ, Եկեղեցի-ժողովուրդ կապի կարևոր բաղադրիչը մեր հոգևոր կյանքում Եկեղեցու փրկագործական դերի և նշանակության գիտակցումն է: Իսկ Եկեղեցի - ժողովուրդ կապի գործնական դրսևորումը հոգևորական և հավատացյալ կապն է: Եկեղեցին ամեն օր աստվածային սիրո բացահայտումն է կատարում իր անդամների համար: Հոգևորականի առաքելությունն է այդ սերը տեսնելը, ընդունելը և հավատացյալներին փոխանցելը: Աստվածային սիրով է իրական հովվի կապը հավատացյալներիս հետ: Հոգևոր հովիվը հավատացյալին ցույց է տալիս աստվածային սիրո մեծությունը: « Հնարավոր չէ լինել հայր և չլացել զավակների անհաջողությունների համար », -ասել է Հովհան Ոսկեբերանը: Իսկ դա նշանակում է, որ հոգևոր հովիվն ամբողջությամբ ապրում է համայնքի հոգսերով՝ միշտ քայլելով հոտի առջևից: Մարդը մշտապես հենարանի կարիք է զգում. աշխարհի բոլոր կրոնները և ուսմունքները փորձում են մարդուն տալ այդ հենարանը, որի վրա մարդը պիտի կառուցի իր հոգևոր կյանքը: Մեզ համար այդ

	հեմարանը աստվածային սերն է, որի սպասավորը և որը մեզ մատուցողը հոգևորականն է: Ազգային ավանդությունը Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակումը սերտորեն կապում է Սուրբ Հռիփսիմյանց կույսերի նահատակության հետ: Սրանք հռոմայեցի կույսեր էին, որ փախչելով Դիոկղետիանոս կայսեր հալածանքներից գալիս են Արեւելք, երկրպագում Քրիստին և հաստատվում Վաղարշապատ մայրաքաղաքի մոտ: Տրդատը հմայված Հռիփսիմե կույսի գեղեցկությունից, ցանկանում է ամուսնանալ նրա հետ, սակայն մերժվելով հրամայում է բոլոր կույսերին նահատակել: Կույսերի եւ հատկապես Հռիփսիմեի նահատակությունը հոգեկան հզոր ցնցումներ է պատճառում Տրդատին, որ հոգեկան ծանր հիվանդություն է ստանում: 5րդ դարում ժողովուրդը այդ հիվանդությունը բնորոշում էր խոզակերպությամբ եւ Տրդատին քանդակագործության մեջ պատկերում խոզակերպ: Թագավորի քույր Խոսրովիդուխտը մի քանի անգամ երազ է տեսնում թե Տրդատին կարող է բուժել միայն բանտարկված Գրիգորը: Վերջինս ազատվելով բանտարկությունից հանդիսավորապես ընդունվում է Վաղարշապատում: Գրիգորը նախ ամփոփում է նահատակ կույսերի աճյունները, ապա 66 օր քարոզում քրիստոնեության մասին ու բժշկում Տրդատ թագավորին: Թագավորը եւ ողջ արքունիքը քրիստոնյա են դառնում և քրիստոնեությունը հռչակվում է որպես պետական կրոն:
Հաշվետվության կցված նյութեր	Հայ Առաքելական Եկեղեցու դերը հայ ժողովրդի կյանքում

• Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) • Նկարներ • Արդյունքներ	Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին աշխարհի հնագույն եկեղեցիներից է: Այսօր դժվար է պատկերացնել մեր պատմության որևէ հավելված առանց Հայ Առաքելական եկեղեցու և նրա կարևոր դերակատարման: Քրիստոնեության ուսմունքը քարոզելուց, տարածելուց ու պահպանելուց զատ, այն իր վրա է վերցրել նաև ազգային տարաբնույթ հարցերի ու խնդիրների լուծման,նաև ազգապահպանման նվիրական գործը: Ճիշտ է ասված՝ ինչպիսին ժողովուրդն է, այնպես էլ՝ նրա հավատքն ու եկեղեցին: Ժողովուրդն է եկեղեցին, նա է հիմքը, սակայն եկեղեցին որպես առանձին կառույց ազգային դիմագծի կերտողն է, հոգևոր աղբյուրներից սնող մայրը:Դարեր շարունակ հայի կերպարը հղկել ու կերտել է առաքելական եկեղեցին, նրա մեջ սերմանելով հոգևոր յուրահատուկ աշխարհայացք, մշակույթ ու կուլտուրա: Պատահական չէ, որ օտարները մեզ ճանաչում են հավատով որպես ավանդապաշտ ու խաչապաշտ, բնույթով՝ստեղծարար ու տաղանդավոր, գործով՝ արարող ու շինարար ազգի... Պահպանելով ավանդականն ու արմատականը, հայ եկեղեցին միշտ կարևորել է նաև առաջատարն ու ժամանակակիցը, լուսավորելով իր ժողովրդին առաջադիմական գաղափարներով...Պատահական չէ, որ եկեղեցուն կից գրեթե բոլոր դարերում գործել են դպրոցներն ու համալսարանները, որտեղ բացի հոգևոր արժեքներից ուսանել են գրագիտություն նաև աշխարհիկ գիտելիքներ: Փաստաթղթերում կարդում ենք Գլաձորի համալսարանի սաների վկայությունը՝ «Համալսարանում նորոգեցալ զաստիճան վարդապետությեան լուսավորչացն մերոց»: Վաղարշապատում առաջին հայագիր, հայալեզու դպրոցը բացվելուց հետո հիմնվեց կենտրոնական վարժարանը, ուր աշակերտներից ընդունակները ձեռք բերելով ուրիշներին

սովորեցնելու հմտություն, ուղարկվում էին Հայաստանի տարբեր կողմերում ուսուցանելու:

Քրիստոնեության մուտքից անմիջապես հետո հիմնվեց առաջին և միակ բարձրագույն ուսումնարանը՝ Վաղարշապատի մայր վարժարանը, որը հովանավորում էր Վռամշապուհը և ուր անձամբ դասախոսում էին Սահակն ու Մաշտոցը:

Մինչ օրս Հայ Առաքելական եկեղեցին շարունակում է լուսավորչական իր գործունեությունը, հիմնելով նորաներ ճեմարաններ ու հոգևոր հաստատության ուսումնական կենտրոններ:

Աստվածային բարեխնամությամբ առաքյալներից երկուսն ուղարկվեցին Հայաստան, դարձի բերելու այն ժողովրդին, որը սերվել էր Աստծո կողմից օրհնված Հաբեթա տնից, բայց հեռացել ուղիղ ճանապարհից: Սուրբ առաքյալների ճահատակությամբ ու նրանց արյան գնով դրվեց քրիստոնեության հիմքը Հայաստանում: Եվ այսպես, առաջին դարից սկսյալ առաքյալների շնորհիվ ձևավորվեցին առաջին հինգ՝ Երուսաղեմի, Անտիոքի, Ալեքսանդրիայի, Հռոմեական և Կոստանդինոպոլսի եկեղեցիները: Հետագայում դրանց մեջ ընդգրկվեցին նաև քույր եկեղեցիները: Բոլոր եկեղեցիները հավասար էին և ընդհանրական հարցերը որոշվում էին տիեզերական ժողովներում: Դավանաբանական անհամաձայնությունների արդյունքում սակայն եկեղեցիները բաժանվեցին: Հայոց եկեղեցին մինչ օրս հավատարիմ մնաց առաքելահաստատ իր ակունքներին, քրիստոնեությունը դարձնելով իր ժողովրդի կենսատու ուժը, հանապազօր հացն ու ջուրը:

Քրիստոնեությունը հայերի համար դարձավ բարոյականության հիմնարար օրենսգիրքը, բարերար ազդեցություն գործելով նրա պատմության տարբեր հատվածներում: Հեթանոսությունը, ուր իշխում էր ուժը, հարստությունը, հպարտությունն ու դաժանությունը իր տեղը զիջեց հումանիզմին, սիրուն,

գթասրտությանը,համախմբելով բոլորին նույն հավատի, նույն եկեղեցու շուրջ:

Եկեղեցին մեծ առաքելություն ունի նաև մեր ժողովրդի հոգևոր և ֆիզիկական պահպանման գործում:Հավատքի շնորհիվ մշտապես զորացել է ազգի ոգին:

Հոգևոր նկարագրի ձևավորման ժամանակ կարևորագույն դեր են խաղում նաև էթնիկական հոգեբանության որոշ հատկանիշներ, երբ անհատը հոգեբանական տեսանկյունից գիտակցում է իր պատկանելությունը «մենք» հանրությանը և աշխատում է յուրացնել նրան բնորոշ հատկանիշները: Յուրաքանչյուր ժողովուրդ ունի իրեն բնորոշ հոգեբանություն, որը փոխանցվում է մշակութային ժառանգության յուրացման ճանապարհով: Այս պատճառով ազգային-հոգևոր նկարագրի ձևավորման գործընթացը տրոհվում է ընտանեկան և հասարակական միջավայրերում: Սրանցից յուրաքանչյուրն ունի կրթադաստիարակչական, ծիսական, ավանդական կանոնակարգված սկզբունքներ ու նորմեր, որոնք դրվում էին մարդու ազգային - հոգևոր նկարագրի ձևավորման հիմքում:

Ազգային-հոգևոր նկարագրի բաղադրատարրերից են ընտանիքի ձևավորման սկզբունքները, սովորույթները, կենցաղը: Հոգևոր նկարագրի ամբողջացման մեջ զգալի դեր են խաղում հարսանեկան, ծննդյան, թաղման սովորույթները և ծեսերը: Սովորույթները պարզ ու կոնկրետ իրավիճակներում անհատի առօրյա կյանքը կարգավորող վարվելակերպի նորմեր են: Ծեսերը խորհուրդ պարունակող արարողություններ ու գործողություններ են, որոնք վարվեցողության կարգավորման առավել բարդ ու խիստ ձևերն են:

Հայ քրիստոնյայի շարժիչ ուժը միշտ եղել են ազատ մտածելու ու գործելու կարողությունը և պատասխանատվության գիտակցությունը: Այս հարցում, կարծում եմ, մեծագույն դերը վերապահված է ընտանիքին, նրա դավանած արժեքներին ու

	սկզբունքներին: Հնտանիքն է, որ պիտի չափավորի, սահմանափակի ՁԼՄ-ների ու համացանցի, փողոցի ու օտարոտի բարքերի և կրոնական հոսանքների ազդեցությունը, իր անդամին թույլ չտա տրվելու սպառողի հոգեբանությանը՝ այդ ամենը չեզոքացնելով տիրող ջերմ ու անմիջական՝ սիրո մթնոլորտով, բարիք արարելու տրամադրությամբ: Այլապես սերիալների ու հոլովակների էժանագին պահանջարկ բավարարող ժամանցի ինստիտուտը կբռնի ճաշակ ձևավորող ու կրթող և ժամանակի փորձությունն անցած ավանդական արժեքների տեղը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Եզնիկ քահանա Պետրոսյան, Դոկտոր Աստվածաբանության, Հայ եկեղեցու պատմությունը, Մաս Ա, «Հաղպատավանք», Բարեգործական Միություն, 1990:
2. Մատաթիա Արքիեպիսկոպոս Օրմանյան, Հայոց եկեղեցին, Տպարան կաթողիկոսութեան Հայոց Կիլիկոյ, Անթիլիաս-Լիբանան, 1952:
3. « Քրիստոնեության հաչակումը պետական կրոն » :